Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության խորհրդի 2021 թվականի
մայիսի 27-ի N 2 - 3 որոշմամբ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով ռեկտորի ընտրության պայմանները, նրանց ներկայացվող որակական և մասնագիտական պահանջները, ինչպես նաև ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ընտրության կազմակերպումն ու անցկացումը:

1.1. Համալսարանի ռեկտոր կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և առնվազն 5 տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ:

1.2. Համալսարանի ռեկտորի ընտրության օրվան նախորդող օրերի ընթացքում համալսարանի գիտական խորհուրդը կամ այլ ստորաբաժանում կարող է քննարկում

կազմակերպել առաջադրված թեկնածությունների վերաբերյալ և համալսարանի խորհրդին ներկայացնել կարծիք:

1.3. Ռեկտորի ընտրությունները կատարվում են բաց մրցույթի կարգով՝ համալսարանի խորհրդում, փակ գաղտնի քվեարկությամբ, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Համալսարանի ռեկտորն ընտրվում է 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

(1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերը լրաց. 25.07.2024 N 8-1)

2. Ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ օրենքով նախատեսված լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), հայտարարում է համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար բաց մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

(2-րդ կետը փոփ. խմբ. 25.07.2024 N 8-1)

2.1. Մրցույթի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տեղադրվում է նախարարության և համալսարանի պաշտոնական ինտերնետային կայքէջերում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքէջում:

2.2. Մրցույթի մասին հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

2) հավակնորդներին ներկայացվող պահանջները՝ սույն ընթացակարգի 1.1-ին կետին համապատասխան,

3) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ սույն ընթացակարգի 2.3-րդ կետին համապատասխան,

4) մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման վայրը (հասցե և հեռախոսահամար), այն էլեկտրոնային փոստի հասցեն, որին դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով,

5) փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի ոչ շուտ, քան նախարարության կողմից մրցույթի մասին հայտարարության հրապարակման տասնհինգերորդ աշխատանքային օրը:

2.3. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) լրացված դիմում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի անունով, որտեղ նշվում են հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց իսկությունը և հասանելիությունը ստուգվում է անմիջապես,

2) ինքնակենսագրություն (CV),

3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

4) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) և գիտական աստիճանը հավաստող վկայականը (բնօրինակները և պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակները,

6) առնվազն 5 տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող վավերացված տեղեկանք (փաստաթուղթ) կամ հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ,

7) հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցուցակ,

8) համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգ՝ փակ և ստորագրված ծրարով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

2.4. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի վերջում ստորագրած) հավակնորդները անձամբ, առձեռն հանձնում են նախարարության անձնակազմի կառավարման վարչության համապատասխան

աշխատակցին կամ առաքում հրապարակված հայտարարության տեքստում մատնանշված էլեկտրոնային փոստի հասցեին:

2.5. Ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը և դրանց համապատասխանությունը սույն ընթացակարգի 2.3-րդ կետի պահանջներին ստուգվում է անմիջապես՝ փաստաթղթային եղանակով մրցույթին դիմելու դեպքում՝ ընդունող անձի կողմից հավակնորդին տրամադրելով համապատասխան նշումով ստացական, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ ինքնաշխատ ուղարկվող հետադարձ հաղորդագրության միջոցով հավաստելով դիմումի ստացումը: Փաստաթղթերում առկա թերությունները կարող են վերացվել հրապարակված հայտարարության տեքստում հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

(2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերը լրաց. 25.07.2024 N 8-1)

3. Ռեկտորի ընտրության կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են համալսարանի միջոցների հաշվին:

4. Հավակնորդների անձնական տվյալների պահպանությունը և այդ տվյալների պաշտպանության երաշխիքները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Դրանց մշակման և պաշտպանման սահմանված կարգը խախտող անձինք, օրենքով սահմանված կարգով, ենթակա են պատասխանատվության:

II. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

5. Լիազորված պետական մարմինը բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստում նշված պայմանների և պահանջների հիման վրա ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդներից ընդունված փաստաթղթերի փաթեթը՝ կից գրությամբ, հանձնում է համալսարանի խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նախագահին կամ քարտուղարին:

6. Խորհրդի նախագահը կամ քարտուղարը ստացական-գրությամբ ընդունում է փաստաթղթերի փաթեթը և մրցույթի անցկացումից առնվազն 5 օր առաջ՝

1) խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները,

2) կազմակերպում է հավակնորդների ազգանվան (ըստ այբբենական կարգի), անվան, ծննդյան տարեթվի, գիտական աստիճանի և գիտական կոչման, զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ տեղեկատվության տարածումը համալսարանում (հնարավորության դեպքում՝ համալսարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև ստորաբաժանումների, ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին և այլն):

7. Խորհրդի մրցութային նիստը նախապատրաստում և նախագահում է խորհրդի նախագահը: Նա հրավիրում է խորհրդի նիստ (մրցույթի անցկացման մասին տրված հայտարարության մեջ նշված օրը և ժամին)՝ ապահովելով խորհրդի անդամների և հավակնորդների մասնակցությունը:

III. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

8. Ռեկտորի ընտրության խորհրդի նիստին խորհրդի նախագահի մասնակցության անհնարինության դեպքում խորհուրդը, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, ընտրում է տվյալ նիստի նախագահ:

9. Նիստի օրակարգը՝

1) նիստի քարտուղարի ընտրություն (եթե խորհուրդը չունի քարտուղար կամ բացակայում է),

2) հավակնորդների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նախատեսված պահանջների համապատասխանության որոշում,

3) համալսարանի գարգացման և բարեփոխման հայեցակարգի (հիմնադրույթների) ներկայացում (հավակնորդների ծրագրային ելույթներ),

4) հավակնորդներին ուղղված հարցեր, խորհրդի անդամների ելույթներ (քննարկումներ),

5) ռեկտորի ընտրություն,

6) ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփում և որոշման կայացում:

10. Խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

11. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե համալսարանի կանոնադրությամբ կամ սույն ընթացակարգով այլ բան նախատեսված չէ:

12. ***(12-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել 25.07.2024 N 8-1)***

13. Խորհրդի նիստի քարտուղարը համալսարանի գիտական քարտուղարն է: Եթե գիտական քարտուղարը բացակայում է, խորհրդի նիստի քարտուղարը ընտրվում է նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Քարտուղարը արձանագրում է նիստը, ելույթ ունեցողի պահանջով հրապարակում արձանագրված ելույթը, իսկ օրակարգի հարցերի սպառումից հետո՝ ամբողջ արձանագրությունը: Նիստի արձանագրությունը, որոշումներն ու քաղվածքները վավերացվում են նախագահի և քարտուղարի ստորագրություններով:

14. Խորհրդի նիստերին ռեկտորի պաշտոնի հավակնորդների մասնակցությունը պարտադիր է: Բացակայող հավակնորդի մասին, նրա գրավոր համաձայնության դեպքում, խորհուրդը, լսելով նախագահի պարզաբանումները, ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

15. Մինչև օրակարգի երկրորդ հարցին անցնելը, խորհուրդը որոշում է նիստի ավարտի, ընդմիջումների, ծրագրային ելույթների, հարցերի ու պատասխանների և քննարկումների ժամանակացույցը: Փակ գաղտնի քվեարկությունն սկսվելուց հետո նիստը շարունակվում է մինչև քվեարկության կամ քվեարկությունների ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

16. Օրակարգի երկրորդ հարցի քննարկումը նախագահը (քարտուղարը) սկսում է հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի (նյութերի) ներկայացմամբ: Ռեկտորի թափուր պաշտոնի համար տրված հայտարարության տեքստում նշված և համալսարանի կանոնադրությամբ ռեկտոր ընտրվելու համար սահմանված պահանջները չբավարարող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ պաշտոնը զբաղեցնելու իրավունքը սահմանափակված հավակնորդների մասնակցությունը ընտրությանը, մերժվում է խորհրդի նիստում նախագահի կամ խորհրդի որևէ անդամի կողմից՝ հրապարակելով մերժման հիմքը:

17. Խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայն է տալիս ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդներին՝ համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգը (հիմնադրույթները) ներկայացնելու համար: Յուրաքաքանչյուր հավակնորդի ելույթից հետո, ներկայացված հիմնադրույթների պարզաբանման նպատակով, խորհրդի անդամները կարող են տալ հարցեր:

18. Ռեկտորի պաշտոնի յուրաքանչյուր հավակնորդի ծրագրային ելույթից հետո, նախագահի առաջարկությամբ, խորհրդի անդամները կարող են տալ հարցեր: Հավակնորդին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, կրթության և գիտության ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համալսարանի կանոնադրությանը:

19. Հավակնորդին տրվող հարցերն ու պատասխանները արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից:

20. Հարցերը սահմանափակվում են նախագահի առաջարկությամբ, խորհրդի որոշմամբ:

21. Ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների ելույթներից հետո սկսվում են թեկնածությունների շուրջ խորհրդի անդամների քննարկումները և դադարեցվում են նախագահի առաջարկությամբ, խորհրդի որոշմամբ: Քննարկումների ավարտից հետո հավակնորդներին կարող է տրվել լրացուցիչ ելույթի հնարավորություն, որի ժամանակը որոշում է խորհուրդը:

IV. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

22. Քննարկումներից և հավակնորդների լրացուցիչ ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտնած հավակնորդների ազգանունները (ըստ այբբենական կարգի), խորհրդի որոշմամբ, ներառվում են քվեաթերթիկում:

23. Նախագահը խորհրդի անդամներին ներկայացնում է սույն ընթացակարգով սահմանված փակ գաղտնի քվեարկության կարգը:

24. Խորհուրդն իր կազմից՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, ընտրում է 5 անդամից բաղկացած հաշվիչ հանձնաժողով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո անցկացվում է քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

25. Հաշվիչ հանձնաժողովը՝

1) կազմակերպում և անցկացնում է քվեարկություն(ներ)ը,

2) հաշվում է ձայները, ամփոփում քվեարկության արդյունքները և կազմում համապատասխան արձանագրություն(ներ),

3) խորհրդի նիստում հրապարակում է քվեարկության արդյունքները:

26. Ռեկտորի պաշտոնի հավակնորդ խորհրդի անդամը չի կարող ընտրվել հաշվիչ հանձնաժողովում:

27. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Ռեկտորի ընտրության քվեաթերթիկում նշվում են հավակնորդների ազգանունը (ըստ այբբենական հերթականության), անունը, հայրանունը:

29. Ռեկտորի ընտրության քվեաթերթիկները ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները: Ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների հակառակ կողմում:

30. Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անվան, ազգանվան դիմացի «ստորագրություն» սյունակում:

31. Քվեարկության ցուցակում բացակա խորհրդի անդամի անվան, ազգանվան դիմացի «ստորագրություն» սյունակում հաշվիչ հանձնաժողովի նախագահը գրում է «բացակա» բառը:

32. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Չի թույլատրվում ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի կամ անձի:

33. Քվեարկության ընթացքում քվեաթերթիկում խորհրդի անդամի կողմից կատարվող որպես միատեսակ նշագրում սահմանվում է V ձևի նշանը:

34. Խորհրդի անդամը քվեաթերթիկում նշում է կատարում ռեկտորի պաշտոնի այն հավակնորդի ազգանվան դիմացի նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում,

որին կողմ է քվեարկում, իսկ ռեկտորի պաշտոնի բոլոր հավակնորդներին դեմ լինելու դեպքում նշում է կատարում միայն «Բոլորին դեմ եմ» բառերի դիմացի դատարկ քառանկյունում (հավելված N 1):

35. Քվեարկությունն սկսվելուց առաջ խորհրդի ներկա անդամների ներկայությամբ ընտրության համար նախատեսված քվեատուփը ստուգվում է, փակվում, սպիտակ թղթով սոսնձվում և ստորագրվում հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

36. Քվեարկության սենյակը պետք է լինի նիստի սրահին հարակից, իսկ քվեասենյակում՝ միայն մեկ քվեարկող:

37. Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո խորհրդի անդամը քվեաթերթիկը քառապատիկ ծալում է, ապա մոտենում քվեատուփին և այն գցում քվեատուփի մեջ:

38. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է մեկական քվեաթերթիկ, հայտարարում է քվեարկության արդյունքը և փոխանցում հանձնաժողովի մյուս անդամներին: Քվեաթերթիկները տեսակավորվում են ըստ հավակնորդների ստացած ձայների՝ առանձնացնելով «Բոլորին դեմ եմ» և անվավեր քվեաթերթիկները:

39. Քվեաթերթիկը վավեր է, եթե պարունակում է սույն ընթացակարգի 33-րդ կետով սահմանված կամ դրան նմանվող նշում և կատարված նշումը հստակ ու աներկբա արտահայտում է խորհրդի անդամի մտադրությունը:

40. Անվավեր են համարվում մեկից ավելի հավակնորդների օգտին քվեարկված, ինչպես նաև ավելորդ նշումներով և գրառումներով քվեաթերթիկները, որոնց հարցը որոշում է հաշվիչ հանձնաժողովը՝ բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Յուրաքանչյուր քվեաթերթիկի վավերության հարցը հանձնաժողովում քննարկվում է մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկի հանելը:

41. Քվեարկության կամ քվեաթերթիկների հաշվման ընթացքի, որևէ քվեաթերթիկի անվավերության կամ վավերության հաշվիչ հանձնաժողովի որոշման հետ կապված անհամաձայնության դեպքում՝ հանձնաժողովի անդամը կարող է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ իր ստորագրության կողքին նշել «հատուկ

կարծիք», իսկ գրավոր շարադրված հատուկ կարծիքը ներկայացնել խորհրդի քննարկմանը՝ քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո:

42. Քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն՝ 2 օրինակից (հավելված N 2):

V. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

43. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները խորհրդի նիստում, որից հետո խորհուրդը, բաց քվեարկությամբ, իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ և ընդունում վերջնական որոշում քվեարկության արդյունքները հաստատելու մասին:

44. Ռեկտորի ընտրության մասին հաշվիչ հանձնաժողովի մեկ օրինակ արձանագրությունը քվեաթերթիկների հետ միասին դրվում են ծրարի մեջ և սոսնձվում: Հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները փակման մասում ստորագրում են ու կնքում բուհի կնիքով: Այդ ծրարը և խորհրդի նիստի արձանագրությունը պահվում են համալսարանում:

45. Խորհուրդը քվեարկության արդյունքների հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ռեկտոր ընտրվելու մասին,

2) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

3) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

46. Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն հավակնորդը, ով հավաքել է խորհրդի անդամների ընդհանուր թվի 50 տոկոսից ավելի ձայներ:

47. Եթե քվեարկությանը մասնակցել է ռեկտորի պաշտոնի երկու հավակնորդ և չի բավարարվել 46-րդ կետի պահանջը, ընտրությունը համարվում է չկայացած:

48. Եթե քվեարկությանը մասնակցել է երկուսից ավելի հավակնորդ և չի բավարարվել 46-րդ կետի պահանջը, անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլում երկու առավելագույն ձայներ ստացած հավակնորդները, իսկ եթե երկրորդի ցուցանիշն ունեն մեկից ավելի հավակնորդներ, նաև այդ հավակնորդները:

49. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա համալսարանի խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ռեկտոր ընտրվելու մասին,

2) քվեարկության հաջորդ փուլ անցկացնելու մասին,

3) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

50. Եթե երկրորդ փուլի քվեարկությանը մասնակցել է ռեկտորի պաշտոնի երկու հավակնորդ և չի բավարարվել 46-րդ կետի պահանջը, ընտրությունը համարվում է չկայացած:

51. Եթե քվեարկության երկրորդ փուլին մասնակցել է երկուսից ավելի հավակնորդ և չի բավարարվել 46-րդ կետի պահանջը, անցկացվում է քվեարկության երրորդ փուլ, որին մասնակցում են երկրորդ փուլում երկու առավելագույն ձայներ ստացած հավակնորդները, իսկ եթե երկրորդի ցուցանիշն ունեն մեկից ավելի հավակնորդներ, նաև այդ հավակնորդները:

52. Վերջին երրորդ քվեարկության արդյունքների հիման վրա համալսարանի խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ռեկտոր ընտրվելու մասին,

2) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

53. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը ճանաչվում է չկայացած, իսկ ռեկտորը համարվում չընտրված, եթե որևէ հավակնորդ չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

54. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար ընտրությունը չկայացած ճանաչելու դեպքում լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարում է ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նոր բաց մրցույթ:

VI. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ

55. Ընտրությունը ճանաչվում է անվավեր, եթե ընթանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, համալսարանի կանոնադրության և սույն ընթացակարգի խախտումներով:

56. Արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն: Եթե նույն թեկնածուն ընտրությունում հավաքում է խորհրդի անդամների ձայների առնվազն 2/3-ը, ապա հիմնադիրը հաստատում է խորհրդի որոշումը:

57. Համալսարանի մրցութային նիստի ընթացքում տեղի ունեցած խախտումների հիման վրա ընտրությունն անվավեր ճանաչվելու դեպքում, լիազորված պետական մարմինը հայտարարում է նոր քվեարկություն՝ 15-օրյա ժամկետում:

58. Ընտրության ընթացակարգի խախտումները և ընտրության արդյունքները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

59. Ռեկտորի ընտրության մասին հաշվիչ հանձնաժողովի մեկ օրինակ արձանագրությունը, ընտրության արդյունքների մասին խորհրդի որոշումը՝ ստորագրված խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից, կից գրությամբ, եռօրյա ժամկետում ներկայացվում են լիազորված պետական մարմին հիմնադրի հաստատմանը ներկայացնելու համար:

60. Ռեկտորի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը, ներառյալ հավակնորդներից սահմանված կարգով ստացված փաստաթղթերը, խորհրդի նիստի արձանագրության հետ միասին՝ ստորագրված խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից, փաթեթավորվում և սահմանված կարգով պահվում են համալսարանում:

61. Ռեկտոր ընտրված անձի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

(ընթացակարգը հաստատվել է ԵՊՏԻ խորհրդի 17.02.2006 նիստում (արձ. N 3), խմբ. ՀՀ կառ. 08.06.2006 N 799-Ն որոշման հիման վրա, փոխ. և նոր խմբագրությամբ հաստատվել ՀՊՏՀ խորհրդի 27.05.2021 N 2-3 որոշմամբ, փոփ., խմբ., լրաց. ՀՊՏՀ խորհրդի 25.07.2024 N 8-1 որոշմամբ)

Հավելված N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

_____ _____ 20 _____ թ.

N	Հավակնորդի ազգանունը, անունը, հայրանունը	
1.		☐
2.		☐
3.		☐
4.		☐
5.		☐
Բոլորին դեմ եմ		☐

Հիշեցում՝

1. Խորհրդի անդամը նշում է կատարում ռեկտորի պաշտոնի այն հավակնորդի ազգանվան դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

2. Ռեկտորի պաշտոնի բոլոր հավակնորդներին դեմ լինելու դեպքում նշում է կատարվում միայն «Բոլորին դեմ եմ» բառերի դիմացի դատարկ քառանկյունում:

Նշումը կատարվում է միայն V ձևի նշանով:

Հավելված N 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռեկտորի ընտրության 20 _____ թվականի _____ _____ -ի խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի N _____ նիստի:

Հաշվիչ հանձնաժողովը՝

1. _____,
2. _____,
3. _____,
4. _____,
5. _____ կազմով

արձանագրում է՝

1) խորհրդի _____ անդամից նիստին ներկա էր _____ -ը,
2) քվեաթերթիկ է ստացել խորհրդի _____ անդամ,
3) քվեատուփում հայտնաբերվել է _____ քվեաթերթիկ:

Ռեկտորի հավակնորդների միջև ձայները բաշխվել են՝

N	Հավակնորդի ազգանունը, անունը, հայրանունը	Կողմ
1.		
2.		
3.		
4.		
5.		

Բոլորին դեմ՝ _____, անվավեր՝ _____ քվեաթերթիկ:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____,
ստորագրություն ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

2. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

3. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն

4. _____ _____
ստորագրություն ազգանուն, անուն